ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունիսի 2026 թվականի № -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի №232-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ԿԵՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի հուլիսի 10-ի ««ԴԵԼՖՈՍ» փակ բաժնետիրական ընկերությանը «Սանէներջի» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №232-Ա որոշմամբ «ԴԵԼՖՈՍ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Սանէներջի» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) (Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի վարչական տարածք (գյուղ Լեռնագոգ (հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-045-0109-0181)) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0787 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0787 լիցենզիա), ինչպես նաև հաստատվել է Կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

ԼԷ №0787 լիցենզիայի պայմանների 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ լիցենզիան գործում է մինչև 2046 թվականի հուլիսի 11-ը, որից մինչև 2026 թվականի հուլիսի 11-ը կառուցման ժամանակահատվածն է:

Ընկերությունը 2026 թվականի մայիսի 11-ի և ի լրումն մայիսի 22-ի գրություններով դիմել է Հանձնաժողով՝ խնդրելով 17 ամիս ժամանակահատվածով երկարաձգել Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 10-ի №232-Ա որոշմամբ Ընկերությանը

տրամադրված՝ ԼԷ №0787 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը: Այսպես՝

Ընկերությունը 2026 թվականի մայիսի 11-ի (գրությունը Հանձնաժողովում մուտքագրվել է/գրանցվել է 2026 թվականի մայիսի 11-ին) գրությամբ հայտնել է, որ *«ՌԻԵԼ ԻՍԹԵՅԹ ԴԻՎԵԼԸՓՄԵՆԹ ՔԱՄՓՆԻ ՓԲԸ 29.10.2024 թվականին հայցադիմում է ներկայացրել «ԴԵԼՖՈՍ» ՓԲԸ և «ՍԱՆ ՓԱՈՒԵՐ» ՍՊԸ դեմ (այսուհետ միասին՝ Ընկերություններ)՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին՝ միջնորդելով հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ: Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշված հայցադիմումն ընդունել է վարույթ 07/11/2024 թվականին, և ԿԴ/1136/02/24 քաղաքացիական գործով (այսուհետ՝ Գործ) նույն թվականին Դատարանի կողմից բավարարվել է ՌԻԵԼ ԻՍԹԵՅԹ ԴԻՎԵԼԸՓՄԵՆԹ ՔԱՄՓՆԻ ՓԲԸ՝ հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդությունը: Արդյունքում՝ Ընկերություններին սեփականության իրավունքով պատկանող թվով 29 հողամասերի վրա դրվել է արգելանք, Ընկերություններին և այլ անձանց արգելվել է կատարել որևէ գործողություն (օտարում, նվիրատվություն, փոխանակում, վերակառուցում, շինարարական բնույթի ցանկացած աշխատանք, միավորում, բաժանում, անշարժ գույքի նպատակային նշանակության փոփոխություն) այդ գույքերի նկատմամբ (**թեև՝ Ընկերության կողմից ներկայացված գրության նշված հատվածում առհասարակ բացակայում է Կայանի կառուցման համար նախատեսված 04-045-0109-0181 կադաստրային ծածկագրով հողամասը, այնուամենայնիվ, գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ նշված հողի նկատմամբ ևս կիրառվել են սահմանափակումներ**):*

*Գործով Դատարանի կողմից 05.12.2025 թվականին կայացվել է վճիռ, որի համաձայն՝ Ընկերությունների դեմ ներկայացված հայցը մերժվել է, իսկ Դատարանի 25.12.2024 թվականին կայացված որոշման հիման վրա վերոնշյալ գույքերի վրա դրված արգելանքները վերացվել են միայն 16.04.2026 թվականին, համաձայն ՀՀ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշման, և այդ գույքերի նկատմամբ պահպանվել է հայցի ապահովման միջոցը հետևյալ բովանդակությամբ՝ մինչև Գործով եզրափակիչ դատական ակտի կայացումը արգելել Ընկերություններին և այլ անձանց կատարել օտարման, նվիրատվության և փոխանակման գործողություններ նշված*

*գույքերի նկատմամբ՝ 1. Արմավիրի մարզ, համայնք Բաղրամյան, գյուղ Լեռնագոգ (կադաստրային ծածկագիր՝ 04-045-0109-0123 / 04-045-0109-0121), 2. Արմավիրի մարզ, համայնք Բաղրամյան, գ. Լեռնագոգ հողամաս (կադաստրային ծածկագիր՝ 04-045-0109-0116, 04-045-0109-0180, 04-045-0109-0179), 3. Արմավիրի մարզ, համայնք Բաղրամյան, գ. Լեռնագոգ հողամաս (կադաստրային ծածկագիր՝ 04-045-0109-0093, 04-045-0109-0180, 04-045-0109-0181) 4. Արմավիրի մարզ, համայնք Բաղրամյան, գյուղ Լեռնագոգ հողամաս (կադաստրային ծածկագիր՝ 04-045-0109-0108):*

*Տվյալ իրավիճակում Ընկերությունը, իրենից անկախ հանգամանքներում, ամիսներ շարունակ զրկված է եղել իր հայեցողությամբ իրեն պատկանող գույքը տնօրինելու իրավունքից, այդ թվում նաև՝ կառուցման աշխատանքներ իրականացնելուց և այդ աշխատանքներն իրականացնելու համար գույքերը գրավադրելու պայմանով ֆինանսական միջոցներ ներգրավելուց (…):*

*Ստեղծված իրավիճակում՝ Ընկերության համար ստեղծվել են Ֆորսմաժորային (անհաղթահարելի ուժի ազդեցության) պայմաններ, որոնք իրենից կախված չեն եղել, անկանխատեսելի և անկառավարելի են եղել: Ընկերությունը գործադրել է իր լավագույն ջանքերը, որպեսզի հնարավորինս սեղմ ժամանակում արգելանքները վերացվեն,և Ընկերությունը կարողանա շարունակել իր բնականոն գործունեությունը, սակայն դա հնարավոր է եղել միայն սկսած 16.04.2026 թվականից*:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը խնդրել է կիրառել ԼԷ №0787 լիցենզիայի պայմաններով նախատեսված ֆորսմաժորային իրավիճակի համար պայմանները և կառուցման համար Ընկերությանը տրված ժամկետը հետաձգել թիվ ԿԴ/1136/02/24 քաղաքացիական գործով Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքերի վրա դրված արգելանքների ժամանակահատվածով՝ 17 ամսով:

Ընկերությունը 2026 թվականի մայիսի 22-ի գրությամբ հայտնել է, որ նախորդ գրությունում կառուցման համար Ընկերությանը տրված ժամկետները հետաձգել ասելով նկատի է ունեցել ԼԷ № 0787 լիցենզիայով տրված կառուցման ժամանակահատվածի երկարաձգում՝ 17 ամսով:

Ընկերությունը, 2026 թվականի մայիսի 29-ի գրությամբ, Հանձնաժողովին է ներկայացրել նաև թիվ ԿԴ/1136/02/24 քաղաքացիական գործի քաղվածքը datalex դատական համակարգից:

Ընկերությունը, 2026 թվականի հունիսի 1-ի գրությամբ, կրկին անդրադառնալով հայցադիմում ներկայացված լինելու և Դատարանի 07.11.2024 թվականի որոշմամբ հայցի ապահովման միջոց կիրառված լինելու հանգամանքներին, հայտնել է, որ *«... ստեղծված իրավիճակի պայմաններում ընկերությունների մասնակիցների/բաժնետերերի միջև տեղի է ունեցել քննարկում՝ գործով հետագա իրավական և դատավարական ռազմավարությունը մշակելու նպատակով: Քանի որ* «ՊԵՏՐՈԼ ԷՅ ԷՄ» ՓԲԸ-ն *թիվ ԿԴ/1136/02/24 քաղաքացիական գործում՝ որպես մասնակից, ներգրավված չէր, սակայն դրված արգելանք կար հողամասերի վրա, դատավարական մարտավարության տեսանկյունից որոշում է կայացվել, որ վերջինս գործի շրջանակներում որևէ գործողություն չի իրականացնի և չի ներգրավվի դատավարությանը՝ նպատակ ունենալով անբարենպաստ դատական ակտի կայացման դեպքում օգտվել գործին չներգրավված անձի՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքից, ինչը կարող էր հանգեցնել տվյալ դատական ակտի վերացման:*

*Միևնույն ժամանակ, գործով պատասխանողների կողմից 03.12.2024 թվականին ներկայացվել է հայցի ապահովման միջոցների վերացման վերաբերյալ միջնորդություն: Դատարանը 25.12.2024 թվականին մասնակի բավարարել է այդ միջնորդությունը՝ փոփոխելով սահմանափակումները և մի շարք գույքերի համար սահմանափակումը շարադրելով հետևյալ կերպ՝ մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի կայացումն արգելել պատասխանողներին և այլ անձանց կատարել օտարման, նվիրատվության և փոխանակման գործողություններ՝ վերը նշված գույքերի նկատմամբ: Սակայն, նշված որոշման հիման վրա, դատարանի կողմից կատարողական թերթ չի տրամադրվել, ինչի հետևանքով ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից համապատասխան փոփոխությունները չեն իրականացվել: Արդյունքում՝ հայցի ապահովման միջոցների փոփոխության գործընթացը փաստացի կասեցված է եղել: Հաշվի առնելով, որ սպասվում էր ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից համապատասխան որոշման կայացումը՝ Ընկերությանը պատկանող գույքերի նկատմամբ կիրառված սահմանափակումների վերաբերյալ առանձին միջնորդություն ներկայացնելու նպատակով, սակայն ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը համապատասխան որոշումը կայացրել է միայն 16.04.2026 թվականին, այն պահին, երբ գործով արդեն իսկ առկա էր վերջնական դատական ակտ. լրացուցիչ միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը վերացել է»:*

«ԴԱՏԱԼԵՔՍ» դատական տեղեկատվական համակարգի, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված քաղվածքի համաձայն՝ ««ՌԻԵԼ ԻՍԹԵՅԹ ԴԻՎԵԼԸՓՄԵՆԹ ՔԱՄՓՆԻ» ՓԲ ընկերությունը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ Անջելո Հանի Անթունու, Սամուել Հարութիունի Սամուելյանի, Գնել Սերյոժայի Քոչարյանի, «ՍԱՆ ՓԱՈՒԵՐ» ՍՊԸ-ի, «ԴԵԼՖՈՍ» ՓԲԸ-ի, «ԱՆԱՀԻՏ ԴԻՎԵԼՈՓՄԵՆԹ» ՓԲԸ-ի՝ գործարքներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին (թիվ ԿԴ/1136/02/24 քաղաքացիական գործ):

Դատարանի 07.11.2024 թվականի որոշմամբ որոշվել է՝ 1. Հայցվորի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին՝ բավարարել: Մինչև նույն գործով վերջնական դատական ակտի կայացումը արգելանք դնել հետևյալ անշարժ գույքերի վրա. ...1.21. մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան, գյուղ Լեռնագոգ հողամաս (Լեռնագոգ 35 հողամաս, Լեռնագոգ 33 հողամաս, Լեռնագոգ 33-35), (կադաստրային ծածկագիր՝ 04-045-0109-0093, 04-045-0109-0180, 04-045-0109-0181), ...: 2. Մինչև նույն գործով եզրափակիչ դատական ակտի կայացումը արգելել պատասխանողներին և այլ անձանց կատարել որևէ գործողություն (օտարում, նվիրատվություն, փոխանակում, վերակառուցում, շինարարական բնույթի ցանկացած աշխատանք, միավորում, բաժանում, անշարժ գույքի նպատակային նշանակության փոփոխություն) հետևյալ անշարժ գույքերի նկատմամբ. 2.21. մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան, գյուղ Լեռնագոգ հողամաս (Լեռնագոգ 35 հողամաս, Լեռնագոգ 33 հողամաս, Լեռնագոգ 33-35), (կադաստրային ծածկագիր՝ 04-045-0109-0093, 04-045-0109-0180, 04-045-0109-0181), ...:

Դատարանի 25.12.2024 թվականի «Միջնորդությունը բավարարելու մասին» որոշմամբ որոշվել է թիվ ԿԴ/1136/02/24 քաղաքացիական գործով պատասխանող ՍԱՆ ՓԱՈՒԵՐ ՍՊԸ-ի և ԴԵԼՖՈՍ ՓԲԸ-ի ներկայացուցիչ Կարեն Մարգարյանի միջնորդությունը՝ քաղաքացիական գործով կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ՝ բավարարել մասնակի, վերացնել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.11.2024թ. որոշմամբ հետևյալ գույքերի նկատմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները. ...

3. (1.21.) մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան, գյուղ Լեռնագոգ հողամաս (Լեռնագոգ 35 հողամաս, Լեռնագոգ 33 հողամաս, Լեռնագոգ 33-35), (կադաստրային ծածկագիր՝ 04-045-0109-0093, 04-045-0109-0180, 04-045-0109-0181), ..., այդ թվում՝

նշված գույքերի նկատմամբ հայցի ապահովման միջոցը պահպանել հետևյալ բովանդակությամբ. մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի կայացումը արգելել պատասխանողներին և այլ անձանց կատարել օտարման, նվիրատվության և փոխանական գործողություններ՝ վերը նշված գույքերի նկատմամբ:

Դատարանի 25.12.2024 թվականի «Միջնորդությունը բավարարելու մասին» որոշումն ուժի մեջ է մտել հրապարակման պահից:

«Լիցենզավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից տրվող լիցենզիաների լիցենզավորման կարգերը հաստատում է Հանձնաժողովը:

Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ)

76-րդ կետի համաձայն՝ Լիցենզիայում ամրագրված ժամկետի (**կառուցման**, վերակառուցման ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (կառուցման, վերակառուցման ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը,

77-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտն իր մեջ, ի թիվս այլնի, պետք է պարունակի կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի երկարաձգման դեպքում՝ կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի համար իրականացված աշխատանքների մասին տեղեկություններ, որտեղ պետք է նշվեն նաև աշխատանքների չիրականացման պատճառները.

Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, եթե՝ Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,

10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը սույն կարգով սահմանված դեպքերում Հայաստանի

Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Սույն կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝ 1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո. 2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ՝ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար,

10.1-ին կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից:

11-րդ կետի համաձայն՝ սույն կարգի իմաստով, մասնավորապես, ֆորս մաժոր են՝

1) բնական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները.

2) ապստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումները, զինված հակամարտությունները, արտաքին թշնամու գործողությունները կամ շրջափակումը, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, երկարաձգվել սույն կարգով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ լիցենզավորված անձը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

12-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 11-րդ կետը չի սահմանափակում լիցենզավորված անձի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ սույն գլխի պահանջներին բավարարելու դեպքում՝ դրանք ևս ֆորս մաժոր ճանաչելու համար:

*Վերոգրյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը Հանձնաժողովին վերապահել է իր կողմից տրվող լիցենզիաների լիցենզավորման կարգերը հաստատելու լիազորություն: Հանձանաժողովի հաստատած Կարգի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված* ***կառուցման*** *ժամանակահատվածի երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության, այդ թվում՝ կառուցման ժամանակահատվածի ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը, և որը պետք է պարունակի կառուցման՝ իրականացված աշխատանքների մասին տեղեկություններ՝ նշելով նաև աշխատանքների չիրականացման պատճառները:*

*Եթե Հանձնաժողովը որոշում է ընդունում արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու մասին, որպես կանոն, երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:*

*Նշված կանոնից սահմանված է բացառություն այն դեպքերի համար, երբ լիցենզավորված անձի կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի, իսկ Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝ չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո,* ***և միաժամանակ լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար****:*

*Կարգով թվարկվել են ֆորսմաժորային դեպքերը, միևնույն ժամանակ, դրանցով չսահմանափակելով լիցենզավորված անձի իրավունքը՝ թվարկված դեպքերից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում*

*դիմել Հանձնաժողով՝ Կարգի պահանջներին բավարարելու դեպքում դրանք ևս ֆորս մաժոր ճանաչելու համար:* ***Միաժամանակ, Կարգով նախատեսվել է, որ Լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից:***

***Վերը նշված նորմերի հաշվառմամբ հարկ է նշել, որ խնդրո առարկա իրավահարաբերությունների շրջանակներում լիցենզավորված անձին վերապահված է Հանձնաժողովին միայն կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու պահանջի մասին հայտ ներկայացնելու իրավունք, իսկ Հանձնաժողովի համար սահմանված է պարտականություն՝ հայտը բավարարել և երկարաձգել կառուցման ժամանակահատվածը, եթե հայտը համապատասխանում է Կարգի պահանջներին:***

***Միաժամանակ, Հանձնաժողովը, պետք է ինքնուրույն գնահատի հայտում նշված՝ աշխատանքների չիրականացման պատճառները, և դրանց՝ Կարգի իմաստով ֆորս մաժորի հետևանք չհանդիսանալու պայմաններում որոշի երաշխիքով սահմանված գումարի կեսը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ աշխատանքների չիրականացման պատճառները Կարգի իմաստով ֆորս մաժորի հետևանք հանդիսանալու պայմաններում երաշխիքով սահմանված գումարի կեսը չփոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:***

Հանձնաժողովը, ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները և ղեկավարվելով Կարգով սահմանված իրավակարգավորումներով, գտնում է, որ ԼԷ №0787 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու վերաբերյալ Ընկերության հայտը ենթակա է բավարարման, քանի որ Ընկերության կողմից ներկայացված՝ Կայանի ***կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու պահանջի մասին հայտը*** համապատասխանում է Կարգի պահանջներին:

Անդրադառնալով լիցենզիայի պայմանների 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում կայանի կառուցման աշխատանքների չիրականացման պատճառներին՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը հետևանք չէ ֆորս մաժորի. մասնավորապես՝ Ընկերության կողմից նշված հանգամանքները, թեև չեն գտնվել լիցենզավորված անձի վերահսկողության ներքո, այնուամենայնիվ, լիցենզավորված անձը չի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային,

**օրենսդրությամբ նախատեսված**) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, և հատկապես վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար:

Նախ, և՛ «ԴԱՏԱԼԵՔՍ» դատական տեղեկատվական համակարգի, և՛ Ընկերության կողմից ներկայացված քաղվածքի համաձայն՝ Դատարանի 07.11.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովումը՝ կայանի կառուցման համար նախատեսված՝ մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան, գյուղ Լեռնագոգ թիվ 04-045-0109-0181 կադաստրային ծածկագրով հողամասում շինարարական բնույթի ցանկացած աշխատանք իրականացնելու արգելքի մասով, 25.12.2024 թվականից վերացվել է. մասնավորապես՝ Դատարանի 25.12.2024 թվականի «Միջնորդությունը բավարարելու մասին» որոշմամբ որոշվել է. «*թիվ ԿԴ/1136/02/24 քաղաքացիական գործով պատասխանող ՍԱՆ ՓԱՈՒԵՐ ՍՊԸ-ի և ԴԵԼՖՈՍ ՓԲԸ-ի ներկայացուցիչ Կարեն Մարգարյանի միջնորդությունը՝ քաղաքացիական գործով կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ՝ բավարարել մասնակի: Վերացնել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.11.2024թ. որոշմամբ հետևյալ գույքերի նկատմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները. 3. (1.21.) մարզ Արմավիր, համայնք Բաղրամյան, գյուղ Լեռնագոգ հողամաս (Լեռնագոգ 35 հողամաս, Լեռնագոգ 33 հողամաս, Լեռնագոգ 33-35), (կադաստրային ծածկագիր՝ 04-045-0109-0093, 04-045-0109-0180, 04-045-0109-0181), ... Վերը նշված գույքերի նկատմամբ հայցի ապահովման միջոցը պահպանել հետևյալ բովանդակությամբ. Մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի կայացումը արգելել պատասխանողներին և այլ անձանց կատարել օտարման, նվիրատվության և փոխանական գործողություններ՝ վերը նշված գույքերի նկատմամբ:»:*

**Դատարանի 25.12.2024 թվականի «Միջնորդությունը բավարարելու մասին» որոշումն ուժի մեջ է մտել հրապարակման պահից:**

**Այսինքն՝ օբյեկտիվ իրականության մեջ առկա չի եղել դատական ակտ, որի առկայության պայմաններում Ընկերությունը զրկված էր Կայանի կառուցման շինարարական աշխատանքներն իրականացնելու հնարավորությունից: Ավելին՝ այն դատական ակտը, որին հղում անելով Ընկերությունը գտնում է, որ առկա է եղել խոչընդոտ, Դատարանի 25.12.2024 թվականի «Միջնորդությունը բավարարելու մասին» որոշմամբ վերացվել է:**

**Հետևաբար, մինչև** 07.11.2024 թվականը՝ **Դատարանի կողմից** հայցի ապահովում կիրառելը և կիրառված հայցի ապահովումը **վերացնելու օրվանից՝ 25.12.2024 թվականից առկա չի եղել որևէ խոչընդոտ Կայանի կառուցման աշխատանքների իրականացման համար:**

Բացի այդ, Ընկերության կողմից ներկայացված 2026 թվականի հունիսի 1-ի գրությունն իր բովանդակությամբ վերաբերում է ոչ թե Ընկերությանը, այլ՝ «ՊԵՏՐՈԼ ԷՅ ԷՄ» ՓԲԸ-ին:

Ավելին՝ նշվածը տեխնիկական վրիպակ դիտարկելու և այն ենթադրաբար Ընկերությանը վերաբերելի լինելու պայմաններում ևս չի համապատասխանում իրականությանը, քանի որ այդ գրության համաձայն Ընկերությունը չի հանդիսացել նշված դատական գործով մասնակից, մինչդեռ և՛ «ԴԱՏԱԼԵՔՍ» դատական տեղեկատվական համակարգի, և՛ Ընկերության կողմից ներկայացված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հանդիսացել է նշված դատական գործով պատասխանող, ավելին՝ ներկայացրել է միջնորդություն, որը բավարարվել է:

Չնայած նշվածին՝ այդ գրությամբ Ընկերությունը փաստացի հայտնել է, որ տեղյակ լինելով դատական գործի, այդ թվում՝ կիրառված հայցի ապահովման միջոցի մասին որոշակի դիտավորությամբ, այն է՝ հետագայում դատական ակտի բեկանման հիմքերը չբացառելու նպատակով, որպես մարտավարություն, չի իրացրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավունքները և չի ներգրավվել խնդրո առարկա դատական գործին, այդ կերպ՝ չձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ **օրենսդրությամբ նախատեսված**) իր կողմից նշված հանգամանքները (սույն դեպքում՝ կիրառված հայցի ապահովման միջոց) կանխելու, և հատկապես վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, մինչդեռ, օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով (Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք կարող են ներգրավվել գործին իրենց միջնորդության հիման վրա) իրեն վերապահված իրավունքից, կարող էր ներգրավվել դատական գործում և որպես դատավարության մասնակից իրականացնել լիցենզիայի պայմանների 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջից բխող կայանի կառուցման աշխատանքների չիրականացման պատճառները վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար անհրաժեշտ գործողություններ:

Անդրադառնալով Ընկերության այն փաստարկին, որ Դատարանի 25.12.2024 թվականի «Միջնորդությունը բավարարելու մասին» որոշման մասով *դատարանի կողմից կատարողական թերթ չի տրամադրվել, ինչի հետևանքով ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից համապատասխան փոփոխությունները չեն իրականացվել, Հանձնաժողովը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վիճելի իրավահարաբերության ժամանակահատվածում գործող խմբագրությամբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց, օտարերկրյա պետությունների քաղաքացիների և իրավաբանական անձանց, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ սուբյեկտների վրա, որոնք Հայաստանի Հանրապետության դատարանների դատական ակտերին համապատասխան, հանդես են գալիս որպես կատարողական վարույթի կողմեր:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարման ենթակա են՝ քաղաքացիական գործերով դատական ակտերը ...:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը սույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է և կատարողական մակագրության թերթը...:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցներն են՝ 1) պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով. 2) պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելը. 3) այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելը. 4) կատարողական թերթում նշված որոշակի առարկաները պարտապանից առգրավելը և պահանջատիրոջը հանձնելը. 4.1) հարկադիր կատարողի որոշումները չկատարելու համար տուգանք կիրառելը. 4.2) առանձին ագրեգատ, շենք, շինություն կամ այլ օբյեկտ կապարակնքելը (կնքելը). 5) կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցներ:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Կատարողական վարույթի կողմերն են՝ պահանջատերը և պարտապանը:

Պահանջատերն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը, օտարերկրյա պետությունը կամ միջազգային կազմակերպությունը, որի օգտին, կամ ի շահ որի՝ տրվել է կատարողական թերթը: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի օգտին քաղաքացիական, վարչական և քրեական գործերով դատական (վարութային) ծախսերի բռնագանձման վերաբերյալ կատարողական թերթով հարուցված կատարողական վարույթի ընթացքում, որպես պահանջատե,ր Հայաստանի Հանրապետության անունից հանդես է գալիս պետական եկամուտների կոմիտեն, եթե դատական ակտի համաձայն՝ դատական (վարութային) ծախսերը ենթակա չեն գանձման որևէ պետական մարմնի օգտին:

Պարտապանն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը որը, կատարողական թերթի համաձայն, պարտավոր է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատական ակտի հիմքով տրամադրվում է կատարողական թերթ, եթե դատական ակտը ենթադրում է կատարում, այն է՝ առկա է հարկադիր կատարման միջոցներ կիրառելու անհրաժեշտություն:

Սույն դեպքում Դատարանի 25.12.2024 թվականի «Միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը չի ենթադրել որևէ նոր պարտավորություն, այսինքն՝ կատարում, ուստի՝ առկա չի եղել կատարողական թերթ տալու օրենսդրական պահանջ:

Ավելին՝ անկախ նշված դատական ակտի հիմքով կատարողական թերթ տալու հանգամանքից, Դատարանի 25.12.2024 թվականի «Միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը ուժի մեջ է մտել հենց 25.12.2024 թվականից և պարտադիր էր բոլորի համար հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործով դատարանը կայացնում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտեր են սույն հոդվածի 2-րդ մասում չնշված որոշումները, որոնք կայացվում են առանձին ակտի ձևով կամ արձանագրային որոշմամբ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

Ավելին՝ Ընկերությունը զրկված չէր իրացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավունքները և առնվազն գործադրել ջանքեր լիցենզիայի պայմանների 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում կայանի կառուցման աշխատանքների չիրականացման իր կողմից նշված ենթադրյալ պատճառները վերացնելու ուղղությամբ, մասնավորապես՝

օգտվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի իրավակարգավորումներից՝ բողոքարկել հարկադիր կատարողի, Ընկերության գնահատմամբ վերացման կամ փոփոխման ենթակա որոշումը.

օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներից՝ դատական գործով իրականացնել իրենից՝ իր իսկ գնահատմամբ տրամադրման ենթակա կատարողական թերթ ստանալուն ուղղված գործողություններ.

որպես շահագրգիռ անձ՝ Դատարանի 25.12.2024 թվականի «Միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը ներկայացնել ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը չի հիմնավորել ***լիցենզիայի պայմանների չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը,*** Հանձնաժողովը գտնում է, որ լիցենզիայի պայմանների 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում կայանի կառուցման աշխատանքների չիրականացման պատճառները ***Կարգի իմաստով ֆորս մաժորի հետևանք չեն հանդիսանում, որպիսի պայմաններում երաշխիքով սահմանված***

***գումարի կեսը պետք է փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:***

Ուստի, հիմք ընդունելով Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված Կարգի 76-րդ կետը, 77-րդ կետի 1-ին ենթակետը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, 10-րդ, 10.1-ին, 11-րդ և 12-րդ կետերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. 17 ամիս ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 10-ի ««ԴԵԼՖՈՍ» փակ բաժնետիրական ընկերությանը «Սանէներջի» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №232-Ա որոշմամբ «ԴԵԼՖՈՍ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0787 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը որոշման մեջ «մինչև 2026 թվականի հուլիսի 11-ը» բառերը փոխարինելով «մինչև 2027 թվականի դեկտեմբերի 11-ը» բառերով, իսկ «մինչև 2046 թվականի հուլիսի 11-ը» բառերը՝ «մինչև 2047 թվականի դեկտեմբերի 11-ը» բառերով:

2. «ԴԵԼՖՈՍ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ԼԷ№0787 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Սանէներջի» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի հունիսի 21-ի գրությամբ տրամադրված O.AB.100.12CIB.PIED.0.11250.24 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 62 500 000 (վաթսուներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 31 250 000 (երեսունմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 62 500 000

(վաթսուներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2028 թվականի հունվարի 25-ը գործողության ժամկետով:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունիսի 11-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
հունիսի 2026թ.